

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի  
27 դեկտեմբերի 2013թ.

Նախագահ՝ Ա. Յուզուլյան  
Քարտուղար՝ Հ. Գասպարյան  
Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Կուրսային աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում:  
/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/
2. 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի ուսումնական պարապմունքների  
ավարտի հետ կապված գործընթացի քննարկում:  
/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/
3. II ընթացիկ քննությունների և ստուգումների – ստուգարքային շրջանի  
ամփոփում:

/զեկ. Ա. Վ. Յուզուլյան/

**ԼՍԵՑԻՆ-** Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Յուզուլյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանում նախատեսված է երկու հարց, սակայն օրակարգում ավելացվել է կուրսային աշխատանքների արդյունքների ամփոփումը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուզուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Յուզուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I կիսամյակում կուրսային աշխատանք էր նախատեսված «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության IV կուրսում: Կազմակերպվել և անց են կացվել կուրսային աշխատանքների պաշտպանությունը: Արդյունքները գոհացնող են, ուսանողների և կուրսային աշխատանքների ղեկավարների կողմից իրականացվել է լուրջ աշխատանք:

զերազանց-7

լավ-3

բավարար-2

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ա. Վ. Յուզուլյանը: Նա մանրամասը ներկայացրեց 2013-14թթ. ուս. տարվա I

կիսամյակում կատարված աշխատանքները կապված ուսումնական գործընթացի հետ: Ըստ ժամանակացույցի իրականացվել են բոլոր աշխատանքները՝ համապատասխան ուսումնական պրոցեսին: Չեկուցողը հատուկ ընդգծեց, որ կիսամյակի ընթացքում դասաժամի բացթողում չի եղել, կրճատվել է ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները: Կիսամյակի ընթացքում դեկանատի կողմից նկատողության են արժանացել 17, տնօրենության կողմից խիստ նկատողության 5, իսկ 90ժ. և ավելի անհարգելի բացակայության համար ներկայացվել են տնօրենություն երեք ուսանող՝ հեռացման հարցը քննարկելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Է. Կ. Օսիպովան, Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ընդգծելով, որ ֆակուլտետի որակական գնահատականը կայուն աշխատանքի արդյունքն է:

Օրակարգի երրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքային շրջանի առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Այնուհետև զեկուցողը տվեց ընդհանուր հանձնարարական ամբիոններին և դասավանդող դասախոսներին, որ անհրաժեշտ է պատշաճ նախապատրաստվել քննաշրջանին ըստ ժամանակացույցի անցկացնելով կոնսուլտացիաներ, ապահովելու բարձր առաջադիմություն, իսկ դեկանատին՝ ապահովելու կարգապահությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-** Մ. Ա. Չաքարյանը, Մ. Ս. Աթոյանը և Ա. Ջ. Ալավերդյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողին, ներկայացնելով, որ մշակված է կոնսուլտացիաների անցկացման կարգը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ-**

1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին իրականացնել քննաշրջանի կաազմակերպման հետ կապված աշխատանքները:
2. Հանձնարարել դեկանատին քննաշրջանի ընթացքում սահմանել հերթապահություն:

**ՆԱԽԱԳԱՀ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

**Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**